Շարադրեցեալ ի Հօրէ Յրայ Անդօնիոսէ Կով. տինեան Լեմովիկենացւոց կարգին քարոզողաց սրբազանի աստուածաբանութեան վարդապետէ, և փիլիսոփայութեան դասատուէ ի Համալսարանի սրբոյն Թովմայի Ագուինացւոյ. և յամի տեառն 1724 թարգմանեցեալ ի լատինականէ լեզուէ ի Հայկական բարբառ, աշխատասիրութեամբ Հ. Թէոդորոս վարդապետի Մետրաշացւոյ: Հատոր Ա. ի Վենետիկ Ցլոճիգային պարունակող»:

Հեղինակը ցույց է տվել բնագրերի բոլոր հրատարակությունները, սակայն լավ կլիներ եթե տպագիր հրատարակությունները նշելիս փոխանակ գրելու «այլ տպագրություն», համարակալեր դրանք, մի բան, որը կօգներ արագորեն իմանալու, թե տվյալ էջում նշված աշխատությունը քանիերորդ տպագրությունն է:

«Հայկական մատենագիտություն», դժբախտաբար, զուրկ է անձնանունների, տեղանունների և առարկայական ցանկերից: Կարծում ենք, որ երկրորդ հատորում տեղ կգտնեն ինչպես այդ, այնպես էլ նախորդ հատորի հատուկ անունների, տեղանունների և առարկայական ցանկերը:

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

А. Н. АГАХИ, *Распространение идеи марксизма-ленинизма в Иране* (до второй мировой войны), Издательство АН Азерб. ССР, Баку, 1961, стр. 252, ц. 1 р. 05 коп.

Ա. Ն. ԱԳԱՀԻ, *Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը Իրանում* (մինչև համաշխարհային երկրորդ պատերազմը), Ադրբեջ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատ., Բաքու, 1961, 252 էջ, գինը 1 ռ. 05 կոպ.:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու գլխից. առաջին գլուխը, որն ընդգրկում է մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ընկած ժամանակաշրջանը, վերնագրված է «Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ներթափանցումը Իրան»: Երկրորդ գլուխը, որն ընդգրկում է 1917 թ. մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանը, վերնագրված է «Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը Իրանում»:

Գրքում տրված է Իրանում մարքսիստական գաղափարների տարածման պատմությունը, պարսիկ կոմունիստների աշխատություններում շոշափված երկրի ներքին և արտաքին կյանքին վերաբերող բազմաթիվ հարցերի մարքսիստական լուսաբանումը:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ կապիտալիզմը վերաճեց իր բարձրագույն ստադիային՝ իմպերիալիզմին, Իրանը փաստորեն վերածվեց իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի կիսագաղութի: Հենց այդ շրջանում էր, որ երկրում տեղի էին ունենում ֆեոդալական տնտեսության քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների ձևավորումը: Ազգային բուրժուազիայի և նրան զուգահեռ՝ բանվոր դասակարգի աճը տեղի էր ունենում օտարերկրյա գաղութարարների և ֆեոդալական իշխողների դեմ Իրանի ժողովուրդների մղած պայքարի պայմաններում:

1905—1911 թթ. իրանական բուրժուական ռևոլյուցիան 1905 թ. ռուսական ռևոլյուցիայի առաջին արձագանքն էր Արևելքում: Սահմանադրական այդ շարժումը, որը խոշոր առաջընթաց էր երկրի սոցիալական կյանքում, բարենպաստ հող ստեղծեց սոցիալիզմի գաղափարների ներթափանցման համար: Միանգամայն ճիշտ է նշում հեղինակը, որ «եթե մինչև XX դարի սկիզբը Ռուսաստանի առաջավոր մտածողների ռևոլյուցիոն-դեմոկրատական գաղափարները ազդեցություն էին թողնում Իրանում պրոգրեսիվ հասարակական մտքի զարգացման վրա, ապա քաղաքական պայքարի մեջ ռուսական պրոլետարիատի մուտքով և հատկապես առաջին ռուսական ռևոլյուցիայի ժամանակից սկսած մարքսիզմ-լենինիզմի ազատարար գաղափարները սկսեցին մուտք գործել Իրան և ոգեշնչել նրա ժողովուրդներին՝ ազատության, դեմոկրատիայի և ազգային անկախության համար մղված պայքարում:

Հեղինակը մեծ տեղ է տալիս իրանական տարերթիկ բանվորության դերին, Իրանի այն քայքայված գյուղացիության, արհեստավորների և բանվորների դերին, որոնք գալիս էին Անդրկովկաս՝ ապրուստի միջոց հայթայթելու համար: 1904 թ. միայն Բաքվում իրանցի այդ բանվորները կազմում էին Բաքվի ամբողջ բանվորության մոտ 22 տոկոսը: Պաշտոնական տվյալների համաձայն, 1911 թ. Իրանից Ռուսաստան են մեկնել 192,767 բանվորներ: Այդ

բանվորություններ, ապրելով և աշխատելով Անդրկովկասում և Միջին Ասիայում, մոտիկից շփվում էր ռուսական ռևոլյուցիոներների հետ և Իրան վերադառնալով՝ իր հետ տանում ռևոլյուցիոն գաղափարները։ Հենց այդ շրջաններից է դուրս եկել իրանական բանվորական շարժման խոշոր գործիչ, իրանական ռևոլյուցիայի ակտիվ մասնակից, Ռեշտում առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակի կազմակերպիչ և հետագայում Իրանի Կոմունիստական պարտիայի ղեկավար Հեյդարխան Ամօղլին։

Աշխատության մեջ հատուկ տեղ է տրված 1904 թ. հիմնադրված սոցիալ-դեմոկրատական «Հումմեթ» կազմակերպության գործունեությանը։ Իրանական սահմանադրական շարժման տարիներին ակտիվ մասնակցություն ունեցավ «Հումմեթը»։ Նա կազմակերպում էր իրանական ռևոլյուցիային օժանդակող հատուկ կոմիտեներ, որոնք Իրան էին ուղարկում ռևոլյուցիոն գրականություն, տպագրական սարքավորումներ, զենք և զինամթերք։ «Հումմեթ» անունը կրող թերթը Իրանում սոցիալիզմի գաղափարների ակտիվ տարածողն էր։

Իրանական ռևոլյուցիայի տարիներին երկրի խոշոր քաղաքներում, հատկապես հյուսիսային շրջաններում կազմակերպվեցին սոցիալ-դեմոկրատական առաջին խմբերը, որոնց միացումով հետագայում ստեղծվեց Իրանի սոցիալ-դեմոկրատական պարտիան՝ «Էջթեմայիուն—Ամիյուն»։ Հենց այս շրջանում էր, որ սոցիալիզմ, կոմունիզմ, մարքսիզմ բառերը Իրանում առաջին անգամ սկսեցին գործածվել պրոգրեսիվ մամուլի էջերում։ Այսպես, օրինակ, պոետ ռևոլյուցիոներ Սայիդ Սալմանը գրում էր. «Սոցիալիզմը մարդկության հույսն ու հենարանն է։ Նրա գաղափարը պատկանում է ո՛չ ֆրանսիացիներին, ո՛չ գերմանացիներին և ո՛չ էլ իրանցիներին։ Այս գաղափարը միասնական նպատակ է, մարդկության երջանկության ճիշտ ուղին»։

Մարքսիստական գրականություն տարածվում էր իրանական խոշոր քաղաքներում։ Հեղինակը նշում է այդ գործում Դ. Կ. Օրջոնիկիձեի կատարած խոշոր դերը։ Բոլշևիկների Բաքվի կոմիտեի որոշմամբ 1909 թ. աշնանը Օրջոնիկիձեն գնաց Իրան՝ իրանական ռևոլյուցիոներներին օգնելու համար։ Նրա նախաձեռնությամբ Ռեշտում կազմակերպվեց «Ինտերնացիոնալ ակումբ», որը վերածվեց մարքսիզմ-լենինիզմի գաղափարները տարածող կենտրոնի։ Ռեշտի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ ձեռնամուխ եղավ մարքսիստական գրականության թարգմանություններ պատրաստելուն։

Ամփոփելով աշխատության առաջին գլուխը, հեղինակը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ մինչև 1917 թ. ընկած ժամանակաշրջանը կարող է միայն համարվել Իրանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ներթափանցման շրջան։ Բայց Իրանի սոցիալ-տնտեսական կարգերի հետամնացության պատճառով այդ գաղափարները դեռևս չէին կարող առաջատար դեր խաղալ, լայն կերպով չէին տարածվում ժողովրդական մասսաների մեջ։ Սոցիալ-դեմոկրատիան Իրանում չկարողացավ բարձրանալ կազմակերպված, միասնական ղեկավար կենտրոն ունեցող պարտիայի մակարդակի։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը հսկայական ազդեցություն գործեց ամբողջ Արևելքի, այդ թվում և Իրանի ազատագրական շարժումների վրա։ Ռևոլյուցիոն հզոր շարժումներ սկսվեցին Գիլանում, Իրանական Ադրբեջանում և Իրանի մյուս նահանգներում։ Այդ շարժումներն ունեին հակաիմպերիալիստական բնույթ։ Եթե առաջին ռուսական ռևոլյուցիան արթնացրեց Իրանի ժողովուրդներին և Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ նրանց պայքարի մղեց հանուն մարդկային տարրական իրավունքների, հանուն դեմոկրատիայի, ապա Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը այդ պայքարին տվեց ազգային-ազատագրական, բացահայտ հակաիմպերիալիստական բնույթ։

Ռուսական առաջին ռևոլյուցիայից հետո Իրանում ստեղծվեց սոցիալ-դեմոկրատական պարտիան, Հոկտեմբերի հաղթանակից հետո դեմոկրատական, ազատագրական շարժման առաջավոր գործիչները կազմակերպեցին նոր տիպի պարտիա՝ Իրանի Կոմունիստական պարտիան։ Գիլանի ռևոլյուցիոն շարժումների բնթացքում «Ադալաթ» պարտիայի հիման վրա կազմակերպված Իրանի Կոմունիստական պարտիան և պրոֆմիութենական կազմակերպությունները մեծ աշխատանք ծավալեցին մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման ուղղությամբ։ Պարտիայի օրգաններ «Հաղիգաթ» (Ճշմարտություն), «Խալղ» (Ժողովուրդ), «Քար» (Աշխատանք), «Հարաղե» (Կայծ), «Փեյքար» (Պայքար), «Սեթարեհ սորխ» (Կարմիր աստղ) և այլ թերթերում ու ամսագրերում լուսաբանվում էին մարքսիզմ-լենինիզմի թեորիայի և պրակտիկայի հարցերը։ Պարտիական այդ օրգանների էջերում առաջին անգամ փորձ էր արվում մարքսիստական-լենինյան թեորիան կիրառել իրանական իրականության զարգացման յուրահատուկ պայմաններում։

Աշխատության մեջ նշված են պարտիական մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածնե-

ը և մանրամասն վերլուծված են նրանցից ամենակարևորները։ «Ուֆան» (Փաթարիկ) թերթը թարգմանում է «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը»։ Հետագայում պարսկերեն լեզվով լույս տեսան Մարքսի և Էնգելսի մի շարք այլ գործերը։

Աշխատության հիմնական մասը նվիրված է Իրանի Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ, դոկտոր Թաղի Արանիի կյանքի և գործունեության նկարագրությանը և նրա աշխատությունների վերլուծությանը։ Թ. Արանիի հասարակական-քաղաքական և գրական-մանկավարժական գործունեությունը զգալիորեն ծավալվում է 30-ական թվականներին։ Դա միջազգային քաղաքական հարաբերությունների սրման ժամանակաշրջան էր։ Երկրի ներսում տիրում էր ռեակցիան։ Իզեոլոգիայի բնագավառում այդ տարիները աչքի էին ընկնում շովինիզմի, պանիրանիզմի, նացիոնալիզմի ու ռասիզմի տարածմամբ։ Ահա հենց այսպիսի պայմաններում էր, որ Արանին ծավալեց հասարակական-քաղաքական ու գիտական-լուսավորական լայն աշխատանք։ Նա հիմնադրեց «Դանյա» (Աշխարհ) հանդեսը, որը պրոպագանդում էր մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, պայքարում էր ֆաշիզմի և ռասիզմի դեմ։ Ամսագրի էջերում նա հրատարակեց մի շարք տեսական կարևոր նշանակություն ունեցող հոդվածներ։ Դրանցից են «Միստիկան և մատերիալիզմը», «Մարդը մատերիալիզմի տեսակետից», «Էվոլյուցիա, հարմարումը միջավայրին, ժառանգություն», «Ազատություն և անհրաժեշտություն», «Դիալեկտիկական մատերիալիզմ» և այլ արժեքավոր հոդվածները։ Վերոհիշյալ և բազմաթիվ այլ հոդվածներում Արանին լուսաբանում-պրոպագանդում էր մարքսիզմի կարևորագույն հարցերը։

30-ական թվականներին, երբ պարտիական և պրոֆմիութենական կազմակերպությունները Իրանում լիկվիդացվել էին, երբ Ռիզա շահի դիկտատուրայի արտաքին քաղաքականությունը ավելի հակասովետական և պրոֆաշիստական բնույթ էր ընդունում, Իրանի ժողովուրդները միայն «Դանյա» ամսագրում և Արանիի աշխատություններում էին գտնում առաջադիմական գաղափարները և ճշմարտությունը սոցիալիստական առաջին երկրի՝ Սովետական Միության մասին։

Աշխատության եզրափակիչ մասում հեղինակը նշում է, որ չնայած կոմունիստների և բանվորական շարժման այլ գործիչների դաժան հետապնդմանը, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը Իրանում գնալով ընդլայնվում էր ու ներգրավում աշխատավորական մասսաների լայն շրջանները։ Ռիզա շահի դիկտատուրայի տապալումով և դեմոկրատական-ժողովրդական շարժումների նոր վերելքով, ինչպես նաև 1941 թ. Իրանի ժողովրդական պարտիայի հիմնադրումով մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման պատմական պրոցեսը հասնում է մի նոր աստիճանի և ներգրավում գյուղի ու քաղաքի բնակչության լայն մասսաներին։ Իրանում մարքսիստական գաղափարների տարածման պատմության մեջ Իրանի ժողովրդական պարտիայի գործունեությունը հանդիսանում է կարևոր էտապ, որի լուսաբանումը, ինչպես հեղինակն է նշում, հատուկ ուսումնասիրման նյութ կարող է լինել։

Ինչպես տեսանք, աշխատությունը բազմաբովանդակ է և ընդգրկում է Իրանի նորագույն պատմության կարևորագույն հարցերից մեկի գիտական նկարագրումն ու վերլուծությունը։ Հեղինակը օգտագործել է պարսկերեն լեզվով տպագրված գրականություն, մամուլը և այլ աղբյուրներ, ինչպես նաև ռուսական գրականությունն ու մամուլը՝ հատկապես 1905-ից 1911 թթ. շրջանի վերաբերյալ։

Վերջում՝ երկու գիտողություն։ Աշխատության մոտ կեսը հատկացված է Արանիի աշխատությունների վերլուծությանը, իսկ հարցի պատմությունը մի տեսակ երկրորդ պլանի վրա է մղված։ Արանիի աշխատությունների գիտական խոր վերլուծությունը, անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում, բայց նման ծավալով այն կարող էր առանձին ուսումնասիրության նյութ դառնալ։

1917 թ. հաջորդող տարիների պատմությունը տրված է ավելի սեղմ, քան 1905—1911 թթ. շրջանինը։ Այն փաստը, որ իրանական առաջին ռևոլյուցիայի մասին ավելի շատ ռուսերեն և աղբբեջաներեն ուսումնասիրություններ կան, չի կարող արդարացնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ընկած ժամանակաշրջանի իրադարձությունների համեմատաբար թռուցիկ լուսաբանումը։

Ա. Ագահիի աշխատությունը հանդիսանում է Իրանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմությունն ուսումնասիրելու առաջին փորձը և որպես այդպիսին հետաքրքիր գործ է։

Հ. ԵՓԱՆՅԱՆ